Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ԲՈՒՀՈՒՄ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Թ. Ասատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ա. Սահակյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու **Ա.Ս. Կարապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախուսության պաշտպանությունը կայանալու է 2013թ, մայիսի 30-ին ժամը 14.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. ապրիլի 30-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Վ. ԱՎԱԳՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից հասարակությունը թևակոխել է զարգացման և փոխակերպման այնպիսի փուլ, որը ենթադրում է տարբեր ազգերի և մշակույթների մակարդակով շփումների նոր հարթություն, միջմշակութային հաղորդակցման նոր մակարդակ: Դա իր հերթին պահանջում է միջսուբյեկտային, միջխմբային շփումների, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման միջոցների ու ձևերի բնութագրման նոր մոտեցումներ:

Կրթության համակարգը զարգացել և ձևավորվել է հասարակական միջավայրում՝ բնականաբար իր վրա կրելով հասարակական կյանքում ընթացող բոլոր երևույթների ազդեցությունը:

Փոխակերպվող հասարակության զարգացման միտումներով և կրթական բարեփոխումների ընդհանուր գաղափարախոսությամբ ու քաղաքականությամբ պայմանավորված՝ բարձրագույն կրթության հիմնական խնդիրներից է դառնում մասնագետների արժեքային կողմնորոշումների, հաղորդակցման կոմպետենցիաների ընդհանուր, մասնագիտական և հաղորդակցման մշակույթի ձևավորումը:

Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորումն ու զարգացումը հատկապես կարևոր արդիական է կրտսեր դպրոցական տարիքի համար, քանի որ այդ տարիքը համարվում է անձի մտավոր ուժերի բուռն զարգացման, վարքի, արժեքային կողմնորոշումների ձևավորման շրջան: Տարիքային այդ կենսափուլում լայն հնարավորություններ կան կրտսեր դպրոցականների հաղորդակցական գործունեության մշակույթի հիմքերի մշակման համար:

Մեզ հետաքրքրող հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնախնդրի առանձին տեսանկյուններ դիտարկվել են Մ.Ֆ. Քվինթիլիանոսի, Յա.Ա.Կոմենսկու, Ա.Ա. Բալյանի, Մ.Մ. Մանուկյանի, Ա.Մ. Մանուկյանի, Մ.Մ. Բախտինի, Լ.Ի. Բոժովիչի, Ա.Ա. Բոդալևի, Լ.Պ. Բուևայի, Ա.Ա.Դերկաչի, Ս.Կ. Իկոննիկովայի, Մ.Ս. Կագանի, Մ.Ի. Կովալենկոյի, Ա.Գ. Պեկշևայի, Յու.Մ. Լուրմանի, Ա.Ա. Լեոնտևի, Մ.Լ. Միտինայի, Ա.Վ. Մուդրիկի, Լ.Ի. Վ.Ա. Կան-Կալիկի, Ա.Ն. Սուխովի, Վ.Ա. Սլաստենինի, Յու.Պ. Պլատոնովի, Ա.Ի. Շչուրկովայի, Ս.Ռ. Գևորգյանի, Ն.Խ. Հակոբյանի, Ա.Վ. Հովհաննիսյանի, Ա.Վ. Դավթյանի, Ա.Յու. Հովհաննիսյանի, Կ.Վ. Հարությունյանի, Ս.Մ. Խրիմյանի և այլոց աշխատություններում:

Ուսանողների հաղորդակցման մշակույթի ձևավորման հարցերը հետազոտվել են Ս.Ա. Ալֆերևայի, Գ.Ա. Անոխինայի, Լ.Ֆ.Գասինայի, Ն.Ա. Գամովայի, Ի.Ա. Զիմնյայայի, Ն.Վ. Կուզմինայի, Ն.Գ. Մասգուտովայի, Վ.Վ. Սոկոլովայի, Լ.Վ. Սոխանի, Պ.Պ. Սկլյարի, Գ.Պ. Մաքսիմովայի և այլոց կողմից: Հաղորդակցման մշակույթի ձևավորման պայմանների և մոդելների բացահայտմանն են ուղղված Ն.Պ. Ֆիրսովի, Գ.Գ. Սեչկարևի, Վ.Բ.Տիտովի և այլոց աշխատությունները: Հատկապես մասնագիտական հաղորդակցման կոմպետենտության զարգացման հիմնախնդրին են նվիրված Ռ. Բելլի, Լ. Բաշմանի, Ի.Ի. Բախտվիչի, Ռ.Ա. Բելոուսովի, Վ.Ս. Գրեխնևի, Ի.Ի. Զարեցկայայի, Վ.Ա. Կան-Կալիկի, Մ.Գ. Ռուդի, Մ. Շվայնի, Վ.Ս.

Չերնյավսկայայի, Պ.Վ. Բատյաննիկովի, Հ.Հ. Պետրոսյանի և այլոց հետազոտությունները:

Վերջին շրջանում հատկապես ակտիվացել են հետազոտությունները տարրական դպրոցի սովորողների հաղորդակցման ընդունակությունների և սոցիալական հմտությունների զարգացման տեխնոլոգիաների մշակման և բնութագրման վերաբերյալ (Մ.Ա. Աբդուլինա, Ե.Վ. Ժուրավլևա, Ե.Վ. Կրավչենկո, Լ. Յա. Լոզովա, Ե.Վ. Ստեպանովա, Ե.Ի. Պասսովա և այլք):

Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացի մեթոդաբանական և տեխնոլոգիական ապահովումը մեր կողմից իրականացվել է՝ հաշվի առնելով անձի ընդհանուր մշակույթի, նրա հիմնական բաղադրիչների, հատկապես հաղորդակցական մշակույթի տարբեր տեսանկյունների վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, սոցիոլոգիական և մանկավարժական գրականության մեջ արտացոլված գաղափարները, հայեցակետերը և հայեցակարգային մոտեցումները:

Գիտական հետազոտությունների վերլուծությունը ցույց տվեց, որ գիտնականների հիմնական ուշադրությունը բևեռված է ուսուցման գործընթացի սուբյեկտների փոխգործակցության, շփման մեխանիզմների և սովորողների հաղորդակցման մշակույթի ձևավորմանն ուղղությամբ ուսուցչի պատրաստության հիմնախնդրի ուսումնասիրմանը: Սակայն նրանց կողմից առաջադրված մոդելները և ձևերն այսօր ամբողջությամբ չեն կարող լուծել տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման խնդիրը նրա մասնագիտական գործունեության յուրահատկության պատճառով:

Միևնույն ժամանակ մեր կողմից իրականացված փորձարարական հետազոտությունը ցույց տվեց, որ տարրական դպրոցի շատ ուսուցիչներ լիարժեք պատկերացում չունեն կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հաղորդակցման մշակույթի՝ որպես սոցիալական հմտության դրսևորման բարձր մակարդակի, բովանդակության կառուցվածքի, առանձնահատկությունների, օրինաչափությունների և նրա ձևավորման գործոնների մասին, լիարժեքորեն զարգացած չեն նրանց հաղորդակցական կոմպետենցիաները:

Մեր դիտարկումները փաստում են տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացում առկա հակասությունները՝

- մի կողմից՝ հասունացել է մանկավարժական բուհի կրթական գործընթացում «Մանկավարժություն և մեթոդիկա» (տարրական կրթություն) ֆակուլտետի ուսանողների հաղորդակցման մշակույթի ձևավորման նոր տեխնոլոգիայի մշակման և ներդնման խնդիրը՝ որպես նրա հետագա մասնագիտական գործունեության արդյունավետության պայման, մյուս կողմից՝ մանկավարժական գիտության մեջ դեռևս ոչ բավարար չափով են մշակված բուհում ուսանողների մասնագիտական պատրաստության պրակտիկայում այդ խնդիրն իրագործելու և այն համապատասխան գործնական հանձնարարականներով ապահովելու վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները,
- հաղորդակցման բարձր մշակույթի և վարքի էթիկետի տիրապետող ուսուցիչ ունենալու հասարակական պահանջմունքի և ներկայումս առկա իրա-

կան վիճակի միջև:

- մանկավարժական բուհում ապագա ուսուցչի հաղորդակցական մշակույթի ձևավորման գործնականում իրականացման և դրա մեթոդաբանական, գիտամեթոդական ու տեխնոլոգիական ապահովման բացակայության միջև:

Հետազոտության հիմնախնդրի ոչ լիարժեք գիտական մշակվածությունը, արդիականությունն ու կարևորությունը պայմանավորեցին մեր ատենախոսության թեմայի ընտրությունը՝ **«Կրտսեր դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիան բուհում»:**

Հետազոտության նպատակը բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում տարրական դասարանների ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի արդյունավետ ձևավորման տեխնոլոգիայի մշակումն ու ներդնումն է:

Հետազոտության օբյեկտը մանկավարժական բուհում տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության գործընթացն է:

Հետազոտության առարկան մասնագիտական պատրաստության գործընթացում ուսանողների հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիական համակարգն է:

Հետազոտության վարկածը մեր այն ենթադրությունն է, որ տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորումը կլինի ավելի արդյունավետ, եթե՝

- մանկավարժական բուհում տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության բովանդակությունը կողմնորոշված լինի ուսանողների հաղորդակցական կոմպետենցիաների և հաղորդակցման մշակույթի ձևավորմանը,
- մշակվի և մասնագիտական պատրաստության գործընթացում ներդրվի այնպիսի մանկավարժական տեխնոլոգիա, որը կներառի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների տարրերը և կնպաստի ուսանողների հաղորդակցման կոմպետենցիաների և մշակույթի զարգացմանը, և որի արդյունքում նրանց ապագա մանկավարժական գործունեության ընթացքում կապահովվի կրտսեր դպրոցականների սոցիալական հմտությունների, այդ թվում հաղորդակցական կարողությունների ձևավորումը,
- հաշվի առնվեն տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական հաղորդակցման մշակույթի ձևավորման սկզբունքները,
- ստեղծվեն մանկավարժական անհրաժեշտ պայմաններ բուհի կրթամշակութային միջավայրում ուսանողների հարմարման և սոցիալականացման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար,
- մշակվի և մասնագիտական կրթության համակարգում ներդրվի ուսանողների հաղորդակցման մշակույթի ձևավորմանը նպաստող հատուկ ընտրովի դասընթացի ծրագիր:

Հետազոտության նպատակով, օբյեկտով և վարկածով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիոլոգիական գրականության գիտական վերլուծության հիման վրա բացահայտել հաղորդակցման մշակույթի էությունը, կառուցվածքը, ձևավորման սկզբունքները,

առանձնահատկությունները և բովանդակությունը մանկավարժական կրթության համակարգում:

2. Բացահայտել ուսանողների՝ տարրական դպրոցի ապագա ուսուցիչների հաղորդակցման մշակույթի ձևավորվածության ելակետային մակարդակը և դրա ձևավորմանը նպաստող գործոնները մանկավարժական բուհում:
3. Մշակել և բուհի կրթական գործընթացում ներդնել տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը նպաստող հատուկ դասընթացի ծրագիր:
4. Մշակել և գիտափորձով հիմնավորել տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման արդյունավետությանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա:
5. Մշակել հիմնախնդրի վերաբերյալ գործնական հանձնարարականներ:

Առաջադրված խնդիրների լուծման և վարկածի ստուգման համար օգտագործվել է գիտական հետազոտության հետևյալ **մեթոդները՝**

- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, մշակութաբանական, հոգեբանամանկավարժական, ուսումնամեթոդական գրականության տեսական վերլուծություն,
- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական բուհերի փորձի ուսումնասիրում,
- տարրական դպրոցի ուսուցիչների աշխատանքային փորձի ուսումնասիրում և վերլուծություն,
- զրույց, հարցազրույց, անկետավորում, թեստավորում, ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողների հաղորդակցման մշակույթի առանձին բաղադրիչների կարողությունների դրսևորման և տարրական դպրոցների ուսուցիչների ստեղծագործական գործունեության մասնագիտական փորձի ուսումնասիրում,
- մանկավարժական գիտափորձ /հավաստող և ձևավորող/,
- գիտափորձի արդյունքների վիճակագրական, համեմատական վերլուծություն և մշակում:

Հետազոտության բազան. Հետազոտությունն իրականացվել է 2005-2010 թվականներին Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի մի շարք դպրոցներում: Հետազոտության մեջ ներառվել են 153 ուսանող և 55 տարրական դպրոցի ուսուցիչներ:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով:

Առաջին փուլում /2005-2006 թթ./ ուսումնասիրվել է հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գրականությունը, ուսումնասիրվել է տարրական դպրոցի դասվարների աշխատանքային փորձը:

Երկրորդ փուլում /2007-2008 թթ./ մշակվել է ուսանողների հաղորդակցման մշակույթի զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա, այն փորձարկվել է մանկավարժական բուհում և գործնականում հիմնավորվել:

Երրորդ փուլում /2008-2010 թթ. / կատարվել է հետազոտության արդյունքների

իմաստավորում, ընդհանրացում, վիճակագրական վերլուծություն, մշակված տեխնոլոգիայի փորձաքննություն և ատենախոսության ձևավորում:

Հետազոտության գիտական նորույթը.

- «հաղորդակցում» և «մշակույթ» հասկացության մի շարք սահմանումների դիտարկման արդյունքում ճշգրտվել է «ուսուցչի հաղորդակցման մշակույթ» հասկացության սահմանումը,
- բնութագրվել են տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի էությունը, կառուցվածքային բաղադրիչները և ձևավորման գործընթացի դրդապատճառային, բովանդակային, գործառական-տեխնոլոգիական, ռեֆլեքսիվ-հետադարձ կապի ապահովման բաղադրիչները,
- առաջարկվել են ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման վերաբերյալ նոր՝ մշակութաբանական, հաղորդակցական տեղեկատվական և կոմպետենտային մոտեցումներ,
- բացահայտվել և հիմնավորվել են տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական հաղորդակցման մշակույթի ձևավորման փուլերը,
- մշակվել և գիտափորձով հիմնավորվել են մանկավարժական բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը նպաստող տեխնոլոգիական համակարգը,
- մշակվել և մանկավարժական բուհի ուսումնական գործընթացում ներդրվել է «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը մանկավարժական գործունեության կառուցվածքում» հատուկ դասընթացի ծրագիրը:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- ճշգրտվել է տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի էությունը՝ որպես սոցիալ-մանկավարժական երևույթ և անձնային-մասնագիտական որակ,
- դիտարկվել և հիմնավորվել է ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի դերն ու նշանակությունը տարրական դպրոցի ընդհանուր մանկավարժական գործընթացում,
- որոշվել և ձևակերպվել են ապագա դասվարի հաղորդակցման մշակույթի ձևավորման վրա ազդող գործոնները, որոնք թույլ կտան կատարելագործելու ապագա մանկավարժների մասնագիտական իմիջը,
- հետազոտության արդյունքները և կհարստացնեն, կընդլայնեն տեսական պատկերացումները հաղորդակցման մշակույթի՝ որպես տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական կայացման և անձնային զարգացման կարևոր պայմանի, վերաբերյալ մանկավարժական գիտելիքները:

Հետազոտության գործնական նշանակությունը.

- ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման՝ մեր կողմից մշակված տեխնոլոգիան կարող է ներդրվել մանկավարժական բուհերի համապատասխան ֆակուլտետների կրթական գործընթացում,
- «Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիան» հատուկ դասընթացի ծրագիրը կհամալրի «Մանկավարժություն և մեթոդիկա» (տարրական կրթություն) բաժնում ընտրո-

վի դասընթացների ցանկը:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունը և հիմնավորվածությունն ապահովված են հետազոտության ելակետային դրույթների մեթոդական հիմնավորվածությամբ, հետազոտության առարկային և խնդիրներին համարժեք մեթոդների համալիրի կիրառմամբ, տեսական և փորձարարական մեծածավալ նյութի վերլուծությամբ, մանկավարժական բուհերի ուսուցման գործընթացում հետազոտության արդյունքների ներդրմամբ, հրատարակված գիտական հոդվածներով:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և պրակտիկայում ներդրումը: Հետազոտության նյութերը փորձարկվել և դրական գնահատական են ստացել Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժական կրթության ֆակուլտետում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները

1. Մանկավարժական բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում գերակա է դառնում տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման ու զարգացման խնդիրը. փոխակերպվող հասարակության զարգացման միտումները պահանջում են վերանայել տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության բովանդակությունը, այն ուղղորդել ուսանողների հաղորդակցական կոմպետենտությունների և հաղորդակցման մշակույթի զարգացմանը:
2. Ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթը մասնագիտական պատրաստության կարևոր չափանիշ է և ներառում է կառուցվածքային հետևյալ բաղադրիչները՝ խոսքի մշակույթը, մանկավարժական գործողությունների մշակույթը, վարքագծի մշակույթը, հաղորդակցման անհատական ոճը, ռեֆլեքսիան, մասնագիտական արժեհամակարգը, հաղորդակցական կարողությունները:
3. Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացի դիտարկումը որպես չորս բաղադրիչներից բաղկացած համակարգ՝ դրդապատճառային, բովանդակային, գործառնական-տեխնոլոգիական և ռեֆլեքսիվ-հետադարձ կապի ապահովման:
4. Մանկավարժական բուհերում մասնագիտական պատրաստության գործընթացում ապագա ուսուցիչների հաղորդակցման մշակույթի ձևավորմանը նպաստող հատուկ դասընթացի ծրագիրը:
5. Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիան, որը հիմնվում է շփման միջոցների, կանոնների, միջանձնային փոխհարաբերությունների, էթիկետի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վրա և կրտսեր դպրոցականների հաղորդակցման մշակույթի զարգացման պայման է:
6. Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորվածության ցուցանիշներն են՝
   - դրդապատճառների ձևավորվածությունը,
   - անձնային մասնագիտական հաղորդակցական որակների ձևավորվածու-

թյունը,
- ռեֆլեքսիվ հետադարձ կապի ապահովման կարողությունների ձևավորվածությունը,
- հաղորդակցման կարողությունների և հաղորդակցման սոցիալական հմտությունների զարգացման աստիճանը:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն կազմում է համակարգչային 142 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ «**Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեսական-մեթոդաբանական հիմքերը**» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Ուսուցչի հաղորդակցական մշակույթի ձևավորման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը»,** հիմնավորվում է, որ փոխակերպվող հասարակությունում տեղեկատվական և հեռահաղորդակցական բուռն զարգացման գործընթացներն ու դրանց հետ կապված՝ կրթական հարացույցի փոփոխությունները, կրթական համակարգերի ինտեգրումը արդիական են դարձրել միջմշակութային հաղորդակցումը և երկխոսությունը՝ նոր պահանջներ առաջադրելով մանկավարժական կադրերի մասնագիտական պատրաստությանը, որի կարևորագույն խնդիրներն են համարվում նրանց հաղորդակցման մշակույթի և հաղորդակցական կոմպետենցիաների զարգացումը:

Ընդհանուր մանկավարժական գործընթացում հաղորդակցումն ընթանում է երկու փոխգործակցող սուբյեկտների միջև՝ որպես փոխներգործության արդյունավետ ձև: Ակնհայտ է, որ ապագա մանկավարժի մասնագիտական պատրաստության ռազմավարական նպատակը պետք է լինի նրա հաղորդակցական կոմպետենցիաների և հաղորդակցման մշակույթի ձևավորումը:

Դիտարկված և վերլուծված են մանկավարժական հաղորդակցման, նրա կառուցվածքային բաղադրիչների, բնույթի, հաղորդակցական կոմպետենտության, հաղորդակցման մշակույթի ձևավորման վերաբերյալ աշխատությունները, տեսական և մեթոդաբանական մոտեցումները, հայեցակարգային գաղափարներն ու դրույթները:

Միևնույն ժամանակ հիմնավորվել է, որ այդ աշխատությունները՝ որպես մեթոդաբանական հիմք, տեղեկատվական և մշակութաբանական մոտեցման դիրքերից ապահովում են ուսուցչի հաղորդակցման մշակույթի դիտարկումը համակարգագոյացնող մի շարք հասկացությունների տեսանկյունից՝ մշակութային արժեքներ, էթիկայի նորմեր, մշակութային գործունեություն:

Մանկավարժական գործունեության հաղորդակցական ուղղվածությունը, գործառույթները և բովանդակությունը հիմք են տալիս տարրական դպրոցի ապագա ուսուցչի մանկավարժական մշակույթը դիտարկել որպես նրա մանկավարժական պատրաստության համակարգի ռազմավարական խնդիր:

Մեր հետազոտության համար հատկանշական է այն մոտեցումը, որ հաղորդակցման մշակույթի գործառույթային բնութագիչները հաստատում են նրա առաջնայնությունը՝ արտացոլելով մասնագիտական գործունեության մարդասիրական, բարոյագիտական, փոխգործակցային, ինտեգրատիվ և կարգավորիչ բնույթը:

Ելնելով այս մոտեցումներից՝ հաղորդակցման մշակույթը դիտարկում ենք որպես համակարգ, որի կառուցվածքային բաղադրիչներն են ուսուցչի խոսքի մշակույթը, մանկավարժական գործողությունների մշակույթը, վարքագծի մշակույթը, հաղորդակցման ոճը, հաղորդակցական, մասնագիտական արժեքները, հաղորդակցական կարողությունները, ռեֆլեքսիան, մարդասիրական փոխհարաբերությունների մշակույթը, որոնք բխում են մանկավարժական մշակույթի էությունից:

Հիմնավորվում է, որ ուսուցչի մասնագիտական-հաղորդակցական մշակույթի յուրահատկությունը պայմանավորված է մանկավարժական գործունեության նպատակներով, բովանդակությամբ, մանկավարժական ուղղվածությամբ, մանկավարժական մշակույթի ընդհանուր ինտեգրատիվ բնույթով:

Դիտարկված և բնութագրված է «հաղորդակցում», «շփում» հասկացությունների էությունը, ներկայացված են 20-րդ դարի երկրորդ կեսին սոցիալական հոգեբանության մեջ ձևավորված մի շարք տեսական դրույթներ միջանձնային հաղորդակցման և շփման վերաբերյալ: Քննարկվել և ճշգրտվել են «մանկավարժական հաղորդակցում», «մանկավարժական հաղորդակցման մշակույթ» հասկացությունները:

Ելնելով ուսուցչի հաղորդակցման մշակույթի ընդհանուր բնութագրումից՝ մենք համարում ենք, որ տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթը ավագ դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի համեմատ ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով, դաստիարակչական խնդիրներով, տարրական դպրոցի կրթական չափորոշիչներով և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը ներկայացվող արդի պահանջներով:

Հիմնավորվում է, որ երեխաների հաղորդակցական գործունեության ոլորտի ընդլայնումը նպաստում է նրանց հաղորդակցման, ընկերների հետ շփման իրավիճակների մեջ կողմնորոշվելու կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, շփման գործընթացի մեջ մտնելուն:

Դիտարկված են հաղորդակցման մշակույթի սոցիոլոգիական տեսանկյունները:

Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի համատեքստում մենք մարդասիրական արժեքային կողմնորոշումները դիտարկում ենք որպես համամարդկային բարձրագույն իդեալներ, հաղորդակցման նորմեր՝ կապված հաղորդակցման մշակույթի մասնագիտական արժեքի գիտակցման պա-

հանջմունքների և հետաքրքրությունների, զրուցակիցների ակտիվ դիրքորոշման և այդ ընթացքում երեխայի «հուզազգայական դրսևորումների», հաղորդակցման դրդապատճառների, ռեֆլեքսիայի և հաղորդակցման մշակույթի գնահատման չափանիշների հետ, որոնք նպաստում են երեխայի հաղորդակցման մշակույթի զարգացմանը:

Տարրական դպրոցի ուսուցչի համար հաղորդակցման մշակույթի համատեքստում առաջատար արժեքներ են դառնում երեխան՝ որպես հաղորդակցման սուբյեկտ, մարդասիրական դիրքորոշումները, նորմերը, վարքի կանոնները և հաղորդակցման արժեքային տեսանկյունները:

Ներկայացված է մեր դիրքորոշումը հաղորդակցման մարդասիրական նորմերի վերաբերյալ, որոնք մենք ընկալում ենք որպես տեղեկատվության փոխանցման ընթացքում վարքի հաստատված կարգ ու կանոններ՝ հիմնված փոխադարձ հարգանքի գերակայման սկզբունքների վրա՝ ա) զրուցակցի անհատական նպատակների, պահանջների և հետաքրքրությունների ընդունում, բ) միմյանց նկատմամբ բարյացակամություն, շփման կողմերի միջև հավասարություն, գ) ճշմարտախոսություն և զրուցակցի տեղեկացվածություն, նրա լեզվական ընդունակությունների, զգացմունքների, բարոյական արժեքների հաշվառում:

Հենվելով տարրական դպրոցի ուսուցչի անձի նկատմամբ ժամանակակից պահանջների և վերը շարադրվածի վրա՝ մենք տարրական դպրոցի ապագա հաղորդակցման մշակույթը դիտարկում ենք որպես հաղորդակցական պահանջմունքների, դրդապատճառների, կարողությունների զարգացման և ձևավորման արդյունք, նրա կողմից հաղորդակցման իրականացման մարդասիրական այն միջոցների, ձևերի, կանոնների, չափանիշների, արժեքների, դիրքորոշումների, գիտելիքների, կարողությունների յուրացում, որոնք կուտակվել են պատմական փորձի ընթացքում, և դրանց ստեղծագործական կիրառում՝ ուղղված կրտսեր դպրոցականների հաղորդակցման մշակույթի ձևավորմանը:

Ի տարբերություն հոգեբանամանկավարժական գրականության մեջ առկա մի շարք տեսական մոտեցումների՝ մենք հաղորդակցման մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացը դիտարկում ենք որպես միմյանց փոխկապակցված չորս բաղադրիչներից բաղկացած համակարգ՝ դրդապատճառային, բովանդակային, ռեֆլեքսիվ հետադարձ կապի ապահովման և գործառնական-տեխնոլոգիական: Ներկայացված են այդ բաղադրիչները բնութագրող ցուցանիշները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման խնդրի արտահայտվածությունը մասնագիտական կրթական ծրագրում և չափորոշիչում»,** վերլուծված են «Մանկավարժություն և մեթոդիկա» /տարրական կրթություն/ մասնագիտության պետական կրթական ծրագրի բովանդակությունը և չափորոշիչները:

Ներկայացված են առաջարկներ տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության բովանդակության բարեփոխման համար:

Երրորդ ենթագլխում դիտարկված են տարրական դպրոցի մասնագիտական պատրաստության, դրա օրինաչափությունների վերաբերյալ տեսական-մեթոդաբանական մոտեցումները:

Հիմնավորված են մասնագիտական պատրաստության գործընթացում տար-

րական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման հիմնական սկզբունքները՝ հերթականությունը, տարբերակվածությունը, ամբողջականությունը:

Բնութագրված են դասավարի հաղորդակցական գործունեությանը ներկայացվող մանկավարժական պահանջները:

Նշվում է, որ տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացի փուլային կազմակերպումը այդ համակարգի տարբեր տեսանկյունների նպատակային իրականացում է:

Դիտարկված և բնութագրված են հետազոտվող գործընթացի իրականացման փուլերը՝ նախապատրաստական, տեսական, գործնական:

Ատենախոսության երկրորդ գլխի՝ «**Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման մանկավարժական տեխնոլոգիան բուհում»,** առաջին ենթագլխում՝ **«Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացի բովանդակությունը»,** քննարկված են տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման նպատակը, խնդիրները բուհում, ինչպես նաև մեր հետազոտական աշխատանքների շրջանակներում իրականացրած գործունեությունը: Հիմնավորվում է, որ անձի հաղորդակցման մշակույթը ձևավորվում է հաղորդակցական գործունեության ընթացքում՝ մի շարք ներքին և արտաքին գործոնների ազդեցության շնորհիվ հաղորդակցման պահանջմունքների և դրդապատճառների ձևավորման, հաղորդակցական հնարների, տեխնիկայի և տեխնոլոգիայի յուրացման և վերարտադրման շնորհիվ: Դպրոցի մանկավարժական գործընթացում աշակերտների հետ հաղորդակցման արդյունավետությունը և նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորումը անմիջականորեն պայմանավորված են մանկավարժի հաղորդակցման մշակույթով:

Հիմնավորվում է, որ տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության համակարգը բովանդակային փոփոխության կարիք ունի:

Ներկայացված է մեր կողմից մշակված «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը մանկավարժական գործունեության կառուցվածքում» հատուկ ընտրովի դասընթացի ծրագրի բովանդակությունը, ինչպես նաև դասընթացում օգտագործված հիմնական հասկացությունները և որոշ հասկացությունների հեղինակային ձևակերպումներ:

Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ մանկավարժական բուհում տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորումը ենթադրում է դինամիկ փուլային ընթացք:

Ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորումը բնութագրվում է որպես անձի կայուն ներքին կառուցվածքների ձևավորման գործընթաց՝ ուղղված նրա մասնագիտական կայացմանը:

Ապագա ուսուցիչների հաղորդակցման մշակույթի ձևավորումը կապված է մասնագիտական, էթիկական, բարոյական նորմերի, արժեքների, գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման հետ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Մասնագիտական պատրաստության համակարգում տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման**

տեխնոլոգիայի բնութագիրը» ներկայացված են «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության մի շարք բնութագրումներ: Հիմնավորված է, որ ուսանողների հաղորդակցական կոմպետենցիաների և դրանց հիման վրա հաղորդակցման մշակույթի ձևավորման մանկավարժական տեխնոլոգիայի նախագծումը օբյեկտիվ գործընթաց է, որում ստեղծվում են որակապես տարբեր խնդիրների լուծման նախադրյալները, իսկ հաղորդակցման մշակույթը ընկալվում է որպես տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական-մանկավարժական գործառույթ:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիայի արդյունավետությունն անմիջականորեն պայմանավորված է նրա էքզիստենցիալ և հաղորդակցական ռեֆլեքսիայով, կարողություններով, որոնք մեծ դեր են կատարում մանկավարժական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերություններում պրոբլեմային, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման գործում: Այդ տեսանկյունից սահմանված է «մանկավարժական հաղորդակցման կոմպետենտություն» հասկացությունը:

Ելնելով մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրումից՝ մեր հետազոտության համատեքստում ստեղծագործականն մոտեցման տեսանկյունից կիրառելի ենք համարում ուսուցման հետևյալ տեխնոլոգիաները՝

- համագործակցային,
- ինտեգրատիվ,
- ուսուցման կոլեկտիվ կազմակերպան,
- խաղային,
- մոդուլային,
- ուսումնական և գործնական վարժանքների (թրենինգների),
- համակարգչային-տեղեկատվական,
- հաղորդակցական:

Առանձին-առանձին հիմնավորված են այդ տեխնոլոգիաների ինովացիոն կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացում:

Երրորդ ենթագլխում ներկայացված են՝ **«Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիայի փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը»,** նկարագրված են մանկավարժական գիտափորձի ընթացքը և արդյունքները: Ներկայացված են մեր կողմից մշակված տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի չափանիշները, ցուցանիշները և ձևավորվածության մակարդակների բնութագիրը, փորձարարական հետազոտության ընթացքը, մեթոդիկան, խնդիրները, անկետային հարցումների վերլուծությունը: Ներկայացված են հետազոտության արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական վերլուծության տվյալները /աղյուսակ 1, 2, գծապատկեր 1, 2/:

Աղյուսակ 1

Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի կառուցվածքային առանձին բաղադրիչների ձևավորվածության մակարդակները բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում

Չափանիշները	Հաղորդակցման մշակույթի բաղադրիչների ձևավորվածության մակարդակները գիտափորձի սկզբում					
	ցածր		միջին		բարձր	
	Φ	U	Φ	U	Φ	U
Հաղորդակցման կարողությունները	50.2	55	35.7	32.1	14.1	12.9
Խոսքի մշակույթը	47.2	51.8	40.2	36.4	12.6	11.8
Մանկավարժական գործողությունների մշակույթը	64.4	69	18.8	16.7	16.8	14.3
Վարքագծի մշակույթը	33.2	38.1	53.5	50.9	13.3	11
Ընդհանուր միջին գնահատականը	**48.8**	**53.5**	**37.1**	**34**	**14.2**	**12.5**



Գծապատկեր 1. Հաղորդակցման մշակույթի առանձին բաղադրիչների ձևավորվածության մակարդակները գիտափորձի սկզբում

Աղյուսակ 2

Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի կառուցվածքային առանձին բաղադրիչների ձևավորվածության դինամիկան բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում

Չափանիշները	Հաղորդակցման մշակույթի բաղադրիչների ձևավորվածության մակարդակները գիտափորձի վերջում					
	ցածր		միջին		բարձր	
	Փ	Ս	Փ	Ս	Փ	Ս
Հաղորդակցման կարողությունները	32.5	53	43.3	33.5	24.2	13.5
Խոսքի մշակույթը	34.3	49	47.3	38.6	18.4	12.4
Մանկավարժական գործողությունների մշակույթը	48.3	69.3	28.7	16.5	23	14.2
Վարքագծի մշակույթը	20.1	36.4	59	52.8	20.9	10.8
Ընդհանուր միջին գնահատականը	**33.8**	**51.9**	**44.6**	**35.4**	**21.6**	**12.7**



Գծապատկեր 2. Հաղորդակցման մշակույթի առանձին բաղադրիչների ձևավորվածության դինամիկան գիտափորձի վերջում

Տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացի դինամիկայի հետազոտությունը ցույց տվեց, որ գիտափորձի սկզբում փորձարարական խմբերում բավականին ցածր են նրա առանձին բաղադրիչների ձևավորվածության մակարդակը: Սակայն «Հաղորդակցման մշակույթը մանկավարժական գործունեության կառուցվածքում» ընտրովի դասընթացի ներդնման և ուսուցման առանձին տեխնոլոգիաների ինովացիոն կիրառման արդյունքում գիտափորձի վերջում զգալիորեն փոխվեց ինչպես ուսանող-

ների կողմնորոշվածությունը դեպի իրենց մասնագիտությունը, այնպես էլ նրանց հաղորդակցման մշակույթի կառուցվածքային առանձին բաղադրիչների ձևավորվածության մակարդակը փորձարարական խմբերում: Մինչդեռ ստուգողական խմբերում զգալի չէին այդ փոփոխությունները:

Ինչպես երևում է աղյուսակներում ներկայացված տվյալների համեմատական վերլուծությունից հաղորդակցման մշակույթի դիտարկվող կառուցվածքային բաղադրիչների ձևավորման ցուցանիշները գիտափորձի վերջում զգալիորեն փոփոխված են. նկատվում է դրական դինամիկա:

Այսպիսով, ելնելով գիտափորձի արդյունքների վերլուծությունից, կարելի է փաստել մանկավարժական բուհերի մասնագիտական պատրաստության համակարգում մեր կողմից մշակված «Հաղորդակցման մշակույթը մանկավարժական գործունեության կառուցվածքում» ընտրովի դասընթացի ներդնումը և մի շարք ուսուցման տեխնոլոգիաների ինովացիոն կիրառումը նպաստեցին տարրական դպրոցի ապագա ուսուցիչների հաղորդակցման մշակույթի արդյունավետ ձևավորմանը:

Մեր հետազոտության հիմնախնդրի շրջանակներում առկա տեսական դրույթների և փորձարարական աշխատանքների վերլուծությունը թույլ տվեց անելու հետևյալ **եզրակացությունները:**

1. Տարրական դպրոցի ապագա դասվարի հաղորդակցման մշակույթի ձևավորումը՝ որպես նրա մասնագիտական մշակույթի բաղադրիչ, բուհի մասնագիտական պատրաստության համակարգում ունի տեսական և գործնական նշանակություն:
2. Մանկավարժական բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում էական նշանակություն է ձեռք բերում տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման մակարդակի բարձրացումը՝ որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցման մշակույթի ձևավորման միջոց:
3. Տարրական դպրոցի ուսուցչի անձնային և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների, մանկավարժական գործունեության առանձնահատկությունների և այդ մասնագիտության ուղղությամբ մանկավարժական բուհերի կրթական փորձի վերլուծության հիման վրա բացահայտվել են մասնագիտական պատրաստության գործընթացում առկա հակասությունները:
4. Տեսական-մեթոդաբանական տեսանկյունից հիմնավորված է հետազոտության հիմնախնդիրը՝ ըստ հաղորդակցական, մշակութաբանական, տեղեկատվական և կոմպետենտ մոտեցումների:
5. Ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորվածության ցածր մակարդակի պատճառների ուսումնասիրությունը թույլ տվեց բացահայտել ինչպես բուհի կրթական ծրագրերի բովանդակության մեջ օբյեկտիվ թերությունների առկայությունը, մանկավարժի մասնագիտության նկատմամբ ուսանողների կայուն դրդապատճառների բացակայությունը, այնպես էլ հաղորդակցման մշակույթի զարգացման և ձևավորման տեխնոլոգիայի ոչ բավականաչափ մշակվածությունը:
6. Հետազոտությամբ հիմնավորվել են տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի կառուցվածքային բաղադրիչները՝ հաղորդակ-

ցման կարողությունները, խոսքի մշակույթը, մանկավարժական գործողությունների մշակույթը, վարքագծի մշակույթը, մարդասիրական փոխհարաբերությունների մշակույթը, ռեֆլեքսիան և դրանց ձևավորման գործընթացի բաղադրիչները՝ դրդապատճառային, բովանդակային, գործառնական-տեխնոլոգիական, ռեֆլեքսիվ-հետադարձ կապի ապահովման:

7. Բնութագրված են մանկավարժական բուհում տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման կառուցվածքը, նպատակները, բովանդակությունը և չափորոշիչները:

8. Հետազոտությամբ բացահայտված է, որ մանկավարժական բուհում առկա է մասնագետի հաղորդակցման մշակույթի բարձր մակարդակի ձևավորման իրական հնարավորություն: Այդ դրույթը հաստատվում է սույն հետազոտությամբ, ինչպես նաև մշակված տեխնոլոգիայի ներդրման արդյունքում ուսանողների մեջ հաղորդակցման մշակույթի ձևավորման բարձր մակարդակի դրական դինամիկայով:

9. Մշակվել, փորձարկվել և մանկավարժական բուհի մասնագիտական պատրաստության գործընթացում հաջողությամբ ներդրվել է հաղորդակցման մշակույթի ձևավորման մանկավարժական տեխնոլոգիան, որը ներառում է ուսուցման համագործակցային, ինտեգրատիվ, կոլեկտիվ կազմակերպման, խաղային, մոդուլային, վարժանքների (թրենինգների) համակարգչային-տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաները:

10. Մշակվել և գիտափորձով հաստատվել է տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորվածության չափանիշները՝ մասնագիտության ընտրության դրդապատճառների ձևավորվածությունը, անձնային մասնագիտական հաղորդակցական որակների ձևավորվածությունը, ռեֆլեքսիվ-հետադարձ կապի ապահովման կարողությունների ձևավորվածությունը, հաղորդակցման կարողությունների և սոցիալական հմտությունների զարգացման աստիճանը:

Մեր կողմից անցկացված հետազոտության հիմնական դրույթները, եզրակացությունները հաստատում են, որ լուծված են հետազոտության խնդիրները և հաստատված է առաջադիր վարկածը, իսկ արդյունքների ներդնումը մանկավարժական բուհերի «Մանկավարժություն և մեթոդիկա» (տարական կրթություն) ֆակուլտետների մասնագիտական պատրաստության գործընթացում իրական գործնական նշանակություն ունի:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Հաղորդակցման մշակույթի ուսումնասիրման մոտեցումները և զարգացման հիմնական ուղղությունները, Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրվում է ՀՀ անկախության 15-ամյակին, Գյումրի «Դպիր» հրատ., 2007, էջ 293-296:
2. Կրտսեր դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման արդիական խնդիրները, Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական ման-

կավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, Գյումրի «Դպիր» հրատ., 2008, էջ 249-251:
3. Կրտսեր դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման բովանդակային տեսանկյունը, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրվում է 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի 20-րդ տարելիցին, պրակ 1, Գյումրի «Դպիր» հրատ., 2009, էջ 273-275:
4. Տարրական դպրոցի ապագա ուսուցիչների հաղորդակցման մշակույթի ձևավորման դրդապատճառային արժեքային տեսանկյունը, Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետ. մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրվում է ՀՀ անկախության հռչակագրի ընդունման 20-ամյակին, «Վան Արյան» հրատ., Երևան, 2011, էջ 291-293:
5. Հաղորդակցման մշակույթի զարգացման մանկավարժական պայմանները ապագա դասվարների պատրաստման գործընթացում, «Մանկավարժական միտք» «Տաթև» գիտակրթական համալիր, «Զանգակ-97» հր., 2011, 1-2, էջ 57-63:
6. Տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի բաղադրիչները, Մանկավարժություն, ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտ, N 8, 2011, էջ 18-22:
7. Տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի յուրահատկությունը որպես կրտսեր դպրոցականների մեջ տվյալ որակի զարգացման պայման, Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետ. մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրվում է ՀՀ անկախության 20-ամյակին, Գյումրի, «Էլդորադո» հրատ., Երևան, 2012, էջ 411-415:

Микаелян Лусине Анушавановна

ТЕХНОЛОГИЯ ФОРМИРОВАНИЯ КОММУНИКАТИВНОЙ КУЛЬТУРЫ БУДУЩЕГО УЧИТЕЛЯ МЛАДШЕЙ ШКОЛЫ В ВУЗЕ

Диссертация на соискание ученой степни кандидата педагогических наук по специальности 13.00.01.- “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 30-ого мая 2013г. в 14:00 на заседании специализированного совета “Педагогика” 020 в ВАК по присуждению ученых степней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 375010, Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Происходящие социальные изменения и преобразования на современном этапе предполагают новый уровень общения людей, народов и культур.

Основной задачей высшего образования, обусловленная тенденциями развития меняющегося общества и образовательными нововведениями, является формирование ценностных ориентаций, профессиональной и коммуникативной культуры специалистов.

В контексте реформ системы высшего образования многие специалисты отмечают необходимость формирования коммуникативной культуры будущих специалистов как предпосылки их эффективной профессиональной деятельности.

Развитие коммуникативной культуры учителя актуально и в младшем школьном возрасте, так как этот возраст считается этапом развития умственных возможностей, ценностных ориентаций личности, которые плодотворно влияют на формирование культуры коммуникативного поведения младших школьников.

Для реализации этой задачи в педагогическую практику требуется повышение уровня профессиональной подготовки учителя младшей школы.

Цель исследования: разработать и экспериментально проверить технологию эффективного формирования коммуникативной культуры будущего учителя начальной школы в процессе профессиональной подготовки в вузе.

Задачи исследования:

1. На основе философской, психоло-педагогической, социологической литературы выявить сущность, структуру и содержание коммуникативной культуры в системе профессионального образования.
2. Исследовать проблему в системе профессиональной подготовки вуза.
3. Выявить исходный уровень сформированности коммуникативной культуры студентов – будущих учителей начальных классов, факторы, влияющие на ее развитие в педагогическом вузе.
4. Разработать и внедрить в системе высшего педагогического образования специальную программу, влияющую на формирование коммуникативной культуры будущего учителя начальной школы.

5. Разработать и экспериментально обосновать педагогические технологии, эффективно влияющие на формирование коммуникативной культуры будущего учителя начальной школы.
6. Опубликовать практические рекомендации о проблеме исследования.

Научная новизна исследования:

В результате исследования ряда трактовок понятий «коммуникация» и «общение» обосновано понятие «коммуникативная культура», “социально-коммуникативный потенциал будущего педагога”; характеризованы сущность и содержательные компоненты коммуникативной культуры учителя начальной школы: мотивационный, содержательно-ценностный и технологически-организационный. Предложены новые подходы к формированию коммуникативной культуры будущего учителя начальной школы: информационный, коммуникативный, технологический, выявлены и обоснованы этапы формирования коммуникативной культуры будущего учителя начальной школы. Разработаны и экспериментально обоснованы технология формирования коммуникативной культуры будущего учителя начальной школы в процессе профессиональной подготовки педагогического вуза, разработана и в учебном процессе педагогического вуза внедрена программа курса «Коммуникативная культура учителя начальной школы».

Теоретическая значимость исследования:

Уточнена сущность педагогической культуры будущего учителя начальной школы как социально-культурного феномена и профессионально-личностного качества; рассмотрены и обоснованы роль и значение педагогической культуры будущего учителя в педагогическом процессе начального этапа основной школы; уточнены и сформулированы факторы и механизмы, влияющие на формирование коммуникативной культуры будущих учителей начальной школы, которые будут способствовать совершенствованию педагогического имиджа будущих учителей. Разработана технология, влияющая на формирование коммуникативной культуры студентов, которая обогатит процесс профессиональной готовности студентов отделений педагогики и методики начальной школы новыми положениями и подходами.

Практическая значимость исследования:

- разработанная технология формирования педагогической культуры будущего учителя может быть внедрена в образовательный процесс соответствующих факультетов педагогического вуза;
- разработанная программа курса «Технология формирования коммуникативной культуры будущего учителя начальной школы» дополнит перечень курсов по выбору в отделениях начального образования.

Апробация и внедрение результатов исследования. Материалы исследования были апробированы и получили положительные отзывы на факультете педагогического образования Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна, на кафедре общей педагогики Армянского государственного педагогического университета им. Х. Абовняна.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения списка литературы. По теме диссертации опубликовано семь статей.

Mikaelyan Lusine Anushavan

PRECERVICE ELEMENTARY SCHOOL STUDENT TEACHER'S COMMUNICATION CULTURE FORMATION TECHNOLOGY

Thesis for degree of candidate of pedagogical sciences 13.00.01- "Theory and History of Pedagogy".

The thesis defense will be held on May 30, 2013, at 14^{00} o'clock at the meeting of the Specialized Pedagogical Committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: 17 Tigran Mets Str, 0010, Yerevan).

SUMMARY

The relevance of the research:

In the context of higher education system reforms a number of researchers nowadays give priority to the future specialist's communication culture formation as a prerequisite of successful realization of a professional activity.

The teacher's communication culture development is especially essential for elementary school age as the very age is considered to be the period of the individual's intellectual development, behavior and value orientation development.

The above mentioned is important for elaborating young learner's communication activity culture basis.

The aim of the researchis to elaborate and experimentally justify the future elementary bold school teacher's communication culture effective formation technology in the process of Elementary school preservice student Teacher's higher education institution's professional development.

The objectives of the research:

- To reveal the essence, experimentally the structure and the content of communication culture in pedagogical education system on the scientific literature analysis of Philosophy, Psychopedagogy and Sociology.
- To survey the condition of the problem in the system of higher education institution's professional preparedness.
- To reveal the students'- elementary teachers' communication culture formation level and the factors that promote its formation in pedagogical higher education institution.
- To elaborate and invest a special curriculum that promotes the elementary school teacher's communication culture formation in the educational process of higher education institution.
- To elaborate and to prove by experiment the efficiency of the Elementary school preservice student Teacher's communication culture formation that promotes pedagogical technology.
- To publish practical recommendations on the issue.

The scientific innovation of the research

It reveals and defines the notions of “communication” and “culture”, “communication culture” in the process of surveying and presents the essence and the content components of elementary school teacher’s “communication culture” to promote the motivating, content-value, technological-organizational, offers new informative and competence-based approachesfor the future elementary school teacher’s communication culture formation, proves the effectiveness of elementary school preservice student Teacher’s professional communication culture formation approach, elaborates pedagogical technology and pedagogical conditions that promote future elementary school teacher’s communication culture formation and substantiates experimentally in the process of pedagogical higher education institution professional preparedness, elaborates the special course curriculum “Future Elementary School Teacher’s Communication Culture Formation Technology” and invests it in the process of pedagogical higher education institution.

The theoretical value of the research:

- the future elementary school teacher’s pedagogical culture essence was identified as a social-pedagogical phenomenon and personal professional quality,
- the role and meaning of future elementary school teacher’s communication culture was surveyed and proved in general pedagogical process of basic school elementary level,
- the factors and mechanisms effect the future teacher’s communication culture formation were defined and formed, they will improve the professional image of future educators,
- the pedagogical technology that promotes students’ pedagogical culture formation efficiency was elaborated. This will enrich the process of elementary education Pedagogy and Methods department students’ professional preparedness process in pedagogical higher education institutions with new theoretical approaches.

The practical value of the research:

- the elaborated technology of future teacher’s communication culture can be invested in the education process of pedagogical higher education institutions’ faculties
- the elaborated special course curriculum “Future Elementary School Teacher’s Communication Culture Formation Technology” will enhance the elective subject list in elementary education Pedagogy and Methods departments.

The approbation of the research:

The materials of the research were experimented and positively assessed in the pedagogical education faculty of Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan and in General Pedagogy Chair sessions in Yerevan State Pedagogical University after Kh. Abovyan.

The structure of the research consists of introduction, two chapters, conclusion and bibliography.